

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՅԵՆ ԹԷՌԴՈՍԻՈՅ.

Թիէոդոսիոյ Հայոց Օրիորդական
Դպրոցին Հոգաբարձուները ի
սկզբանէ հետէ այս երեք գլխա-
ւոր գիտմունքը ունեցեր էին, որ
նախ որքան կարելի է շատ աշակեր-
տուհիք այն դպրոցին մէջ ուսում
առնուն . Երկրորդ՝ աշակերտուհեաց
սովորածները ամենուն հարկաւոր բաները
միայն լինին, եւ Երրորդ՝ որքան կարելի
է կարա ժամանակի մէջ, այսինքն իրեք
կամ չորս տարրուան մէջ լրջնայ նո-
ցա առնելու ուսումն ու կրթութիւնը :

Այս պայմաններուն հարկաւորու-
թիւնը քանի գնաց աւելի հասկըցուե-
ցաւ երկու երեք տարրուան մէջ . եւ
Հոգաբարձուները անոնց գիւրաւ հաս-
նելու համար՝ իրենց պարտք ճանչցան
մէկ երկու էական փափոխութիւններ
ընել դպրոցին հիմնական կարգագրու-
թեանցը մէջ, որ առոնք են .

Ա. Աշակերտաց սկզբնական թիւը
ամբողջ պահելու եւ շատցընելու գե-
տաւորութեամբ՝ հարկ համարուեցաւ
մէկ կողմանէ ոչ միայն իւրաքանչիւր
աշակերտին վճարելու տարեկան թոշա-
կը իջեցընել՝ 66 րուպիէն մինչեւ 56
րուպի, հապա նաեւ երկու կարգ ա-
ւելցընել, մէկը տարին 24 րուպիի մի-
այն վճարող, եւ միւսը 12. Մէկ կողմա-
նէ ալ դպրոցին ծախքերը որչափ կա-
րելի է պակսեցընել:

Հոգաբարձուք տարիսութեամբ կծա-
նացաննեն որ Դպրոցին տարեկան ծախ-
քերուն մեծ թեթեւութիւն պիտի լի-
նի այսուհետեւ ասով որ Մեծապատիւ
Ալթուննեան Մանուկ Սղան իւր մինչեւ
ցայժմ բնակած տունը կնուիրէ ազգա-
սիրաբար այս ազգային Դպրոցին :

Բ. Աշակերտուհեաց սովորելիքներուն
մէջէն ամեն հայ օրիորդի հարկաւոր նիւ-
թերն ընտրելով՝ որոշուեցաւ որ նախ՝
գալլիաբէն լեզուն եւ գաշնակը (ֆոռ-
քիիան) առ այժմ կամտոր ուսմանց
կարգը գրուին, յուսալով որ ունեւոր

ծնողք չեն գանգաղիր այս երկու նիւ-
թոց համար առանձին սահմանեալ տուր-
քը վճարել:

Գ. Հայերենին ուսումը աւելի զօրա-
նայ, եւ գրեթէ ամէն ուսմունք հայե-
րէն արուի . այսինքն ոչ միայն կար-
գալ գրելը, քրիստոնէականը, պատ-
մութիւնը, եւ խուաբանութիւնը, հա-
պա նաեւ աշխարհագրութիւնը՝ որ
մինչեւ ցայժմ՝ ուսուերէն էր :

Դ. Ռուսերէնը աւելի գործնական
կերպով սովորեցուի, այնպէս որ աշա-
կերտուհիք երկու երեք տարրուան մէջ
կարողանան այս լեզուով կարգացած-
ները համարձակ հասկընալ եւ չափա-
ւորապէս անսխալ խօսիլ եւ գրել :

Ե. Աւելի ժամանակ պիտի արուի
եւ աւելի ջանացողութիւն պիտի լինի
որ աշակերտուհիք սովորին աղէկ կար,
ձեւք, ապնեգործութիւնն, քաղաքավա-
րութիւն եւ անական կառավարութիւն
կամ տնտեսութիւն :

Առաւոտեան ուսման ժամանակը
գարձեալ կմնայ 8-էն մինչեւ 12. իսկ
երեկոյեան ուսումը կակսի 2-էն ու կը-
տեւէ մինչեւ 4 :

Նմանապէս աշակերտուհեաց հա-
գուստին միակերպութիւնը կպահուի
նոյն ձեւով ու գունով :

Գրութեաննիւթերը, այսինքն թուղթ,
գրիչ, թանաք, դպրոցը կուտայ աշա-
կերտաց . բայց գրքերու գինը ծնողք
կլճարեն :

Թոշակները առաջուց պիտի վճա-
րուին՝ վեց ամսէ վեց ամիս :

Այս հիմանց վրայ կբացուի ահա նո-
րէն թէոդոսիոյ Օրիորդական Դպրոցը .
յուսամը թէ իրենց զաւակներուն ա-
ղէկութեանը փափաքու ծնողք կիու-
թան որ իրենց աղջիկները զուրկ չթո-
ղուն այսպիսի հարկաւոր կրթութենէն՝
որ հիմն է ազգային ուղիղ գասարիա-
բակութեան եւ բարոյական եւ ուսում-
նական յառաջադիմութեան :

ՀՕԴԱԲՈՐՉՈՒԻՔ.

ԹԷՌԴՈՍԻԱ, 17 Օգոստոսի 1862.